EDD հեռախոսային սպասարկման կենտրոն
Բաժանորդային արկղ
Քաղաք, CA, փոստային ինդեքս

Ուղարկման թվականը՝ **00/00/0000**

SSN ՀԱՄԱՐԸ՝ **000-00-0000**

Հայցվորի անունը
Հայցվորի հասցեն
Քաղաքը, CA փոստային ինդեքսը

EDD-ի հեռախոսահամարներ՝

| | |
|---|---|
| Անգլերեն | 1-800-300-5616 |
| Իսպաներեն | 1-800-326-8937 |
| Կանտոներեն | 1-800-547-3506 |
| Մանդարին | 1-866-303-0706 |
| Վիետնամերեն | 1-800-547-2058 |
| TTY (ոչ ձայնային) | 1-800-815-9387 |
| կայք | **www.edd.ca.gov** |

## ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ
## (NOTICE OF UNEMPLOYMENT INSURANCE AWARD)

**1.** Հայցի մեկնարկի թվականը՝ 00/00/0000
**2.** Հայցի ավարտման թվականը՝ 00/00/0000
**3.** Նպաստի առավելագույն գումարը՝ $0000
**4.** Շաբաթական նպաստի գումարը՝ $000
**5.** Աշխատավարձերի ընդհանուր գումարը՝ 00,000.00
**6.** Առավելագույն եռամսյակային եկամուտը՝ 0,000.00
**7.** Այս կետը չի վերաբերում Ձեր հայցին: Լրացուցիչ տեղեկությունների համար տես 7-րդ կետը հակառակ կողմում:
**8.** **Դուք պետք է ամեն շաբաթ փնտրեք լրիվ հաստիքով աշխատանք:** Լրացուցիչ տեղեկություններին ծանոթացեք *«Նպաստների և աշխատանքի որոնման ծառայությունների ուղեցույց»* (*A Guide to Benefits and Employment Services*, DE 1275A) ձեռնարկում, որն առցանց հասանելի է www.edd.ca.gov/forms/ կայքէջում:
**9.** Այս կետը չի վերաբերում Ձեր հայցին:
**10.** Այս Հայցի բավարարումը հաշվարկված է (ստանդարտ կամ այլընտրանքային) բազային ժամանակաշրջանի հիման վրա:

| **11. Աշխատողի անունը՝** | **12. Աշխատողի՝ ստորև նշված թվականով ավարտվող եռամսյակի աշխատավարձերը** | | | | **13. Գործատուի անունը՝** |
|---|---|---|---|---|---|
| | **Ամիս/տարի** | **Ամիս/տարի** | **Ամիս/տարի** | **Ամիս/տարի** | |
| Հայցվորի անունը՝ | 0,000 | 0,000 | 0,000 | 0,000 | ABC CO |
| **14. ԸՆԴԱՄԵՆԸ՝** | **0,000** | **0,000** | **0,000** | **0,000** | |

**Կարևոր տեղեկություններ՝ հաջորդ էջում**

ՍՏՈՐԵՎ ՏՐՎԱԾ ԵՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՍ ԷՋԻ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄՈՒՄ ՆՇՎԱԾ ԿԵՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայցի մեկնարկի թվականը. այն օրը, երբ սկսվում է Ձեր հայցը:
2. Հայցի ավարտման թվականը. այն օրը, երբ ավարտվում է Ձեր հայցը:
3. Նպաստի առավելագույն գումարը. փողի ընդհանուր գումարը, որը կարող եք ստանալ այս հայցից:
4. Շաբաթական նպաստի գումարը. առավելագույն գումարը, որը կարող է Ձեզ վճարվել յուրաքանչյուր շաբաթ, եթե բավարարեք շաբաթական իրավունակության պահանջները:
5. Աշխատավարձերի ընդհանուր գումարը. գործատուի (գործատուների) զեկուցած վաստակի ընդհանուր գումարը էջի դարձերեսի 12-րդ կետում նշված եռամսյակների ընթացքում: Այդ վաստակն օգտագործվել է Ձեր նպաստի առավելագույն գումարը հաշվելու համար:
6. Առավելագույն եռամսյակային եկամուտը. էջի դարձերեսի 12-րդ կետում նշված և ամենամեծ վաստակած գումարով օրացուցային եռամսյակը: Այդ եկամուտը որոշում է Ձեր շաբաթական նպաստի գումարը:
7. Էջի դարձերեսի 7-րդ կետում նշված շնորհումը Ձեզ շնորհված գումարն է՝ առանց այն աշխատավարձերի, որոնք ստացել եք պետական կամ շահույթ չհետապնդող դպրոցից: Եթե էջի դարձերեսի 12-րդ կետում նշված եռամսյակների ընթացքում աշխատել եք պետական կամ շահույթ չհետապնդող դպրոցում, ապա չեք կարող այդ աշխատավարձերը հայցում օգտագործել դպրոցական ընդմիջման ժամանակաշրջանում:
8. Դուք պետք է հետևեք էջի դարձերեսի 8-րդ կետում տրված հրահանգներին, որպեսզի նպաստներ ստանալու իրավունք ունենաք: Ըստ օրենքի՝ նպաստներ ստանալու հայց ներկայացնելիս պարտավոր եք բոլոր ողջամիտ ջանքերը գործադրել աշխատանք գտնելու համար:
9. Գործազրկության ապահովագրության կանոնագիրքը (Unemployment Insurance Code, Section 1277) պահանջում է աշխատել նախորդ հայցի մեկնարկի և ավարտման միջև ընկած ժամանակաշրջանում, որպեսզի հիմնավոր պահանջ ունենաք հաջորդ տարվա համար: Եթե դա վերաբերում է Ձեր հայցին, ապա կստանաք լրացուցիչ հրահանգներ:
10. Բազային ժամանակաշրջանի տեսակը, որը կիրառվում է Ձեր հայցը հաստատելու համար, կլինի կա՛մ Ստանդարտ բազային ժամանակաշրջանը, կա՛մ Այլընտրանքային բազային ժամանակաշրջանը: Եթե Ստանդարտ բազային ժամանակաշրջանում չունեք հիմնավոր հայց հաստատելու համար բավարար աշխատավարձեր, կարող եք Այլընտրանքային բազային ժամանակաշրջանը կիրառելու իրավունք ունենալ: Լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք ձեռնարկը՝ ***«ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ» (A GUIDE TO BENEFITS AND EMPLOYMENT SERVICES*, DE 1275A)**, որը հասանելի է www.edd.ca.gov/forms/ կայքէջում:
11. Աշխատողի անունը. այն անունը, որը Ձեր գործատուն (գործատուները) օգտագործում է էջի դարձերեսի 11-րդ կետում նշված յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ընթացքում Ձեր վաստակած գումարների մասին Զբաղվածության զարգացման վարչությանը (Employment Development Department, EDD) զեկուցելու համար:
12. Աշխատողի աշխատավարձերը ավարտված օրացուցային եռամսյակում. դրանք գործազրկության ապահովագրության նպատակներով հնարավոր օգտագործելի աշխատավարձերն են, որոնք, ըստ Ձեր գործատուի (գործատուների) զեկույցի, Դուք վաստակել եք յուրաքանչյուր նշված օրացուցային եռամսյակի ընթացքում: Այդ վաստակած գումարները որոշում են Ձեզ տրվող Գործազրկության ապահովագրության (Unemployment Insurance, UI) գումարը:

13 Գործատուի անունը. գործատուի (գործատուների) անունը (անունները), ում մոտ աշխատել եք էջի դարձերեսի 13-րդ կետում նշված օրացուցային եռամսյակների ընթացքում:

14. Ընդամենը. գործատուի (գործատուների) զեկուցած վաստակի ընդհանուր գումարը էջի դարձերեսի 12-րդ կետում նշված եռամսյակների ընթացքում:

ՁԵՐ ՀԱՅՑՆ ԱՆՎԱՎԵՐ Է, ԵԹԵ՝

a. Ձեր վաստակած գումարները բավարար չեն նվազագույն պահանջները բավարարելու համար.

b. Դուք ունեցել եք նախկին UI հայց և չեք բավարարել հետագայում հիմնավոր հայց ունենալու համար անհրաժեշտ աշխատանքի և վաստակած աշխատավարձերի վերաբերյալ պահանջները:

ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ.

Ուշադիր ստուգեք այս ծանուցագիրը, որպեսզի համոզվեք, որ բոլոր գործատուները, ում մոտ աշխատել եք ցույց տրված օրացուցային եռամսյակներում (էջի դարձերեսի 12-րդ կետում), նշված են, և որ Ձեր վաստակած աշխատավարձերը ցույց են տրված: Եթե նշված է որևէ գործատու, բայց Դուք չեք աշխատել նրա մոտ, կամ եթե որևէ գործատու նշված չէ, կամ Ձեր աշխատավարձերն անճիշտ են, անհապաղ դիմեք EDD գրասենյակ, որպեսզի բողոքարկեք հաշվարկի ստուգությունը: Դուք կարող եք որակազրկումների, գերավճարումների և (կամ) քրեական պատիժների ենթարկվել՝ զբաղվածության և աշխատավարձի վերաբերյալ 12-րդ կետում ներկայացված որևէ անստույգ տվյալի մասին EDD-ին անմիջապես չտեղեկացնելու համար:

Եթե Դուք աշխատել եք դաշնային գործակալությունում, Ձեր աշխատավարձերի տվյալները պետք է պահանջեք այդ դաշնային գործակալությունից: Դուք այդ ավելացված աշխատավարձերով կստանաք *Ծանուցագիր ճշգրտված գործազրկության ապահովագրություն շնորհելու մասին (Notice of Amended Unemployment Insurance Award):*

Եթե այս ծանուցագիրը կամ ճշգրտված ծանուցագիրը սխալ է, և Դուք ուզում եք բողոքարկել հաշվարկի կամ վերահաշվարկի ստուգությունը, ապա պետք է ծանուցագրի կամ ճշգրտված ծանուցագրի ուղարկման թվականից հետո 20 օրվա ընթացքում դիմեք EDD-ին: Այլապես, աշխատավարձերի հետաքննությունը կամ վերահաշվումը կարող է մերժվել: 20-օրյա ժամանակաշրջանը կարող է երկարաձգվել բավարար հիմքի առկայության դեպքում: Եթե անհրաժեշտ է դիմել EDD-ին, հարկ կլինի հայտնել Ձեր լրիվ անունը, հասցեն ու սոցիալական ապահովության քարտի համարը և, անհրաժեշտության դեպքում, աշխատավարձի և զբաղվածության վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որը կցանկանայիք ավելացնել Ձեր հայցին, կամ ցուցակից հանել այն գործատուներին, ում մոտ չեք աշխատել և աշխատավարձեր չեք ստացել:

**ԴՈՒՔ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՔ *«ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ. ԻՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ» (UNEMPLOYMENT INSURANCE BENEFITS: WHAT YOU NEED TO KNOW)*, DE 1275B ԳՐՔՈՒՅԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ԵՎ *«ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ» (A GUIDE TO BENEFITS AND EMPLOYMENT SERVICES)*, DE 1275A ՁԵՌՆԱՐԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԵՐԿՈՒ ՏՊԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐՆ ԷԼ ԲԱՑԱՏՐՈՒՄ ԵՆ ՁԵՐ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ WWW.EDD.CA.GOV/FORMS/ ԿԱՅՔԷՋՈՒՄ:**

ՈՐՊԵՍԶԻ ՍՏԱՆԱՔ UI ՆՊԱՍՏՆԵՐ, ՊԵՏՔ Է ՎԿԱՅԱԳՐՎԵՔ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ UI ONLINE℠, EDD TELE-CERT℠, ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՔ ԹՂԹԱՅԻՆ *«ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀԱՅՑ» ՁԵՎԸ (CONTINUED CLAIM FORM*, DE 4581*)*: ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՑԵՔ DE 1275A ՁԵՌՆԱՐԿՈՒՄ, ՈՐՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՍԱՆԵԼԻ Է WWW.EDD.CA.GOV/FORMS/ ԿԱՅՔԷՋՈՒՄ:

ԻՆՉՊԵՍ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ UI ՀԱՅՑԸ.

Դուք ունեք Կալիֆոռնիա նահանգի սովորական UI հայցը չեղյալ հայտարարելու տարբերակ այն բանից հետո, երբ Ձեզ փոստով ուղարկվել է *«Գործազրկության ապահովագրություն շնորհելու մասին»* ծանուցագիրը: Եթե ուզում եք չեղյալ հայտարարել Ձեր հայցը, իսկույն դիմեք EDD-ին: UI նպաստների համար վկայագրվելու նպատակով մի օգտագործեք UI Online℠, EDD Tele-Cert℠ և մի ներկայացրեք թղթային *«Շարունակական հայց» ձևը (Continued Claim Form*, DE 4581): Օրենքը թույլ է տալիս UI հայցը չեղյալ հայտարարել միայն այն դեպքում, եթե նպաստներ չեն վճարվել, որակազրկման մասին ծանուցագիր չի ուղարկվել Ձեզ, որևէ գերավճարում չի հաստատվել հայցի վերաբերյալ, և Ձեր հայցի հիման վրա նպաստներ ստանալու տարին դեռ չի ավարտվել: Եթե հայցը չեղյալ հայտարարվի, այն չի կարող վերաբացվել: Դուք պետք է հայց ներկայացնեք ավելի ուշ թվականով: